

7807

33

Z - 53



Հ Ե Ռ Ա Կ Ա
Կ Ո Մ ՈՒ Ն Ի Ս Տ Ա Կ Ա Ն
Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Заочный Коммунистический университет при З. К. У.

Կուրս I. 1929 ր. Առաջագրություն № 1.

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ПОЛИТЭКОНОМИЯ

Ա. Ռ. ԱԶԻՆ Թ. Ե Մ Ա

Քաղաքատնտեսության առարկայի մասին

(Ներածական դասախոսություն, առանց գրավոր աշխատանք ներկայացնելու)

Նախ քան քաղաքատնտեսության ուսումնասիրության դիմելը, անհրաժեշտ է, գոնե ընդհանուր գծերով, պատասխանել այն հարցին, թե ինչ գիտություն է քաղաքատնտեսությունը և ինչ է նա ուսումնասիրում: Ինքնին հասկանալի չէ, վոր քաղաքատնտեսության առարկայի մասին ավելի լրիվ և գիտական զաղափար կազմել կարելի չե միայն այն դեպքում, յերբ սխտեմատիկ կերպով կը մշակվեն տվյալ դասընթացի հաջորդական դասախոսություններն ու առաջադրությունները. ներկա թեմայով մենք սկսում ենք ուսումնասիրել քաղաքատնտեսության առարկան և սրա հետ միաժամանակ, ապրանքային արտադրության ընդհանուր պայմանների մասին միմիայն համառոտ զաղափար պիտի տանք¹⁾:

Հասարակության արտադրողական ուժերն ու արտադրողական հարաբերությունները: Ամեն մի հասարակության, ինչպես նաև կապիտալիստական հասարակության հիմքը նյութական արտադրությունն է: Արտադրական պրոցեսը հասարակական պրոցես է: Անհատ և առանձնակի վորսորդն ու ձկնորսը, վորոնցով սկսում են Սմիտն ու Ռիկարդոն²⁾, XVІІI դարի անճաշակ հերյուրանքն է...

1) Քաղաքատնտեսության առարկայի և մասնավորապես նրա մեթոդի մասին ավելի մանրամասն բացատրություն կը տրվի դասընթացի վերջին թեմայում:

2) Աղամ Սմիտն ու Դավիթ Ռիկարդոն բուրժուական քաղաքատնտեսության հիմնադիրներն են:

33
2-53

Հասարակությունից առանձնացած անհատների արտադրութիւնը նույնպիսի անհեթեթութիւնն է, ինչպէս լեզվի զարգացումը առանց միա-
նշեղ ապրող և իրար հետ խոսող անհատների (Մարքս — Բաղադատնութե-
սութեան քննադատութեան ներածումը):

Այսպիսով Մարքսն ընդգծում է, վոր նյութական արտադրութիւնը, անկախ պատմական դարաշրջանից, միշտ էլ հասարակական արտադրութիւն է. նա ամեն ժամանակ յեղել է մարդկային գոյութեան և հանրա-
կեցութեան հիմքը:

Սակայն այն պայմանները, վորոնց մեջ կատարվում է արտադրական պրոցեսը, բոլոր պատմական դարաշրջաններում միատեսակ չեն:

Մի դարաշրջանի արտադրութիւնը նման չէ մյուս դարաշրջանի ար-
տադրութեանը: Հսկայական տարածութիւն կա նեւտ ու աղեղի, քարե դա-
նակի վայրենու պատահական փոխանակման հարաբերութեան և հազար
ձիւռ ու ռենցող շոգեմեքենայի, շուգեղի մեքենայացրած դաստակի, յեր-
կաթուղու և անգլիական բանկի միջև: (Ենգելս — Անտիդուրիզմ):

Այս կամ այն դարաշրջանի տեխնիկական ցույց է տալիս արտադրութեան միջոցների և գործիքների այն զարգացումն ու հարմարեցումը, վորոնցով մարդը գիտակցորեն և նպատակահարմար ձեւով ներգործում է արտաքին բնութեան վրա: Յուրաքանչյուր դարաշրջանի մարդկային տեխ-
նիկական գործունէութիւնը հիմնվում է տեխնիկայի մարդկային կուլ-
տուրայի վորոշ աստիճանի վրա, այսինքն հիմնվում է հասարակութեան արտադրողական ուժերի վրա: Վերջիններս անվան տակ հասկացվում են արտադրութեան միջոցներն ու գործիքները, ինչպէս և նույն հասարա-
կութեան մարդկային բանվորական ուժը:

Արտադրողական ուժերի մակարդակը ցույց է տալիս հասարակութեան զարգացման այն աստիճանը, վորը նա ձեռք է բերել բնութեան դեմ մղող պայքարով: Արտադրողական ուժերի զարգացումը կազմում է հասարակութեան զարգացման հիմքը:

Արտադրական ուժերի զարգացման աստիճանից է կախված նաև ար-
տադրական հարաբերութիւնների բնույթը, այսինքն այն խառնուրդ-
ութիւնների բնույթը, վորոնք ստեղծվում են մարդկանց մեջ նրանց հասարակական արտադրութեան պրոցեսի ընթացքում: Մարդիկ իրենց կյանքի հասարակական գործունէութեան ընթացքում, ասում են Մարքսը, մտնում են վորոշ, իրենց կամքից կախում չունեցող հասարակական արտադրական հա-
րաբերութիւնների մեջ, վորոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի վորոշ զարգացմանը: Արտադրական հարաբերութիւնների ամբողջ գումարը կազմում է նույն հասարակութեան ստորեկ-
տուրան, այն իրական հիմքը, վորի վրա կառուցվում է իրավական և քաղաքական վերնաշէնը, վորին համապատասխանում են նաև հասարա-
կական գիտակցութեան վորոշ ձևերը (Մարքս — Բաղադատնութեան քննադատութեան ներածումը):

Այսպիսով, արտադրական հարաբերութիւնները քարացած և ան-
փոփոխ չեն: Արտադրողական ուժերի զարգացման հետ փոփոխվում է նաև արտադրական հարաբերութիւնների գումարը, կամ այլ խոսքով հասարա-
կութեան տնտեսական ստրուկտուրան:

Հասարակութեան արտադրական ուժերի ուսումնասիրումը, այսինքն, թէ ինչ կերպ մարդկային աշխատանքն արտադրութեան այս կամ այն մի-
ջոցների ոգնութեամբ աղղում է արտաքին բնութեան վրա, հաշիւաթե-
լով հասարակութեան համար անհրաժեշտ նյութական բարիքներ — արտադրողական ուժերի այդ ուսումնասիրումը միաբերում է տեխնիկական գիտու-

թիւններին: Իսկ քաղաքատնտեսութեան տարեկան վոշ թե տնտեսական գործողութեան տեխնիկան է, այլ արտադրական հարաբերութիւնների ամ-
բողջ գումարը, այսինքն այն հարաբերութիւնները, վորոնք ստեղծվում են մարդկանց մեջ արտադրութեան պրոցեսի ընթացքում:

Սակայն քաղաքատնտեսութեան տարեկան, ինչպէս մենք ներքևում կը համոզվենք, վոշ ամեն տեսակի արտադրական հարաբերութիւններն են, այլ միայն վորոշ տիպի արտադրական հարաբերութիւններ:

Բոլոր տնտեսական կառուցվածքները, ամեն տեսակի տնտեսութիւն-
ները կարող են պատկանել յերկու հիմնական՝ կազմակերպված և անկազ-
մակերպ տիպերի: Կազմակերպված տնտեսութեան տիպին են պատկանում նախնական կոմունիստական համայնքները, ավատական կալվածները, ինչ-
պէս և ապագա կոմունիստական հասարակութիւնը: Անկազմակերպ տնտե-
սութիւններին պատկանում են փոխանակող տնտեսութիւնները (հասարակ
ապրանքային և կապիտալիստական տնտեսութիւնները): Համառոտ գծե-
լով ծանոթանանք թե մեկ և թե մյուս տնտեսութեան հետ:

Կազմակերպված տիպի տնտեսութեան արտադրական հարաբերութիւնները:

Յեթե մենք վերցնենք նախնական համայնքը, ապա նրա մեջ կը գտ-
նենք հետևյալ բնորոշ հատկանիշները: Նախ և առաջ այդ համայնքը
ունի արտադրողական միջոցների սեփականութիւն, ընդհանուր արտադրում
և բաշխում: Համայնական արտադրութիւնն ու բաշխումը կատարվում է
գիտակցորեն, վորոշ ծրագրով: Այստեղ աղղին կա միասնական կազմակերպ-
ված մարդկային կոլեկտիվ, ու նրա անդամների յուրաքանչյուրի դերը
պարզորեն հայտնի յե: Համայնքն իր կազմակերպողի կամ նահապետի գլը-
խավորութեամբ վորոշում է իր արտադրութեան չափը, որինակ, սնունդի,
հագուստի և գործիքների անհրաժեշտ միջոցները և ըստ վերջինիս կազ-
մակերպում է համագործակցական աշխատանք: Համայնքի բոլոր անդամնե-
րը կատարում են հասարակական վորոշ ֆունկցիաներ, մեկը վարում է,
մյուսը վորսում է, յերրորդը հոտն է արածեցնում և այլն: Այսպիսի
տնտեսութեան մեջ բացակայում է ապրանքափոխանակումը, գնումն ու
վաճառքը: Ուստի այս տիպի տնտեսութիւնը քաղաքատնտեսութեան մեջ
կոչվում է փակ տնտեսութիւն: Յեթե այդպիսի տնտեսութեան մեջ վորեւե
առարկայի նկատմամբ տեղի ունի փոխանակում, ապա դա սովորաբար
պատահական յերևույթի բնութ է կրում ու տեղի ունենում վոշ թե այդ
տնտեսութեան ներսում, այլ տարբեր համայնքների մեջ: Միմիայն հետա-
դայում, յերբ արտադրողական ուժերը հասնում են ավելի բարձր զարգաց-
ման, ապրանքափոխանակութիւնը մուտք է գործում նաև նույն համայն-
քի մեջ քայքայելով այդ տնտեսութեան փակ բնույթը, դրա հետ միասին
նաև համայնական կազմակերպութիւնը:

Արտադրութեան և բաշխման այսպիսի կազմակերպված ձեւով է բնո-
րոշվում ապագա մեր կոմունիստական հասարակութիւնը, վորի հիմունքնե-
րը ներկայիս մենք պատրաստում ենք մեր յերկրում:

Ինքնին հասկանալի յե, վոր արտադրողական ուժերի թե զարգացման
աստիճանով և թե հասարակական բարդ կազմակերպութեամբ հասարա-
կական տնտեսութեան այդ յերկու ձևերի միջև գոյութիւն ունի ահագին
տարբերութիւն:

Չուզենիմք արար այստեղ նկատենք, վոր խորհրդային տնտեսութեան
մեջ ևս ունենք ապագա կոմունիստական հասարակութեան մի շարք հիմ-
նական դեր:

29382-67
2001
այդ թեւե

Խորհրդային տնտեսությունը կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող տնտեսությունն է: Մեզ մոտ վերացված է արտադրական միջոցների մասնավոր սեփականությունը (պետականացրած սեկտոր): Պետականը, հենց տնտեսական Վիճակագրական Վարչությունը և Ժողով. Տնտ. Գերագույն Խորհուրդն ապագա ծրագրող մարմինների նախատիպն են: Այս մարմինների միջոցով բանվոր դասակարգը, հանձին իր պետություն, արտադրողական ուժերի, արդյունաբերական միջոցների և բանվորական ուժերի նկատմամբ հաշվառելի լուրջ փորձեր են անում, բաշխելով վերջիններս ըստ հարաբերական չափերի Ժողովրդական տնտեսության հիմնական ձյուղերի մեջ, վերոնշյալ փորձը քաղաքականություն է: Ինքնին հասկանալի չէ, փոր սակիզեն է, այսպես ասած կոմունիստական շինարարության առաջին փուլն է, այն փուլը, յերբ դեռ գոյություն ունի բազմամիլիոն ապրանք, արտադրողների մասնավոր սեփականություն (նույնիսկ փակ տնտեսություն հետքերը), փորոնք դեռ ներս չեն քաշվել ապրանքափոխանակման ծիրը (որբիտա), յերբ քաղաքի և գյուղի կապիտալիստական տնտեսություն տարրերը դեռևս բոլորովին չեն վոչնչացել, չեն վոչնչացել նրանց ստեղծող հիմունքները, յերբ դեռ շարունակվում է պլանային սկզբունքի և շուկայի տարերքի միջև կատաղի պայքար:

Կազմակերպված տիպի բոլոր տնտեսությունների մեջ մարդկային աշխատանքը ղեկավարվում է միասնական կամքով, նրանց աշխատանքի կարգը և արտադրական բարեքնների բաշխումը գտնվում են հասարակական ղեկավարության և հսկողության տակ: Գիտակցական պլանաչափ կերպով կազմակերպված տնտեսության այս կազմը քաղաքատնտեսության համար նյութ չի ծառայում: Վերջինս, իբրև թեորիտիկ գիտություն, այստեղ մաս չունի, փորովհետև արտադրական հարաբերություններն այս դեպքում չափազանց պարզ են և մատչելի չեն մեր հասկացողությանը: Բոլորովին այլ կերպ են դասավորվում չկազմակերպված ապրանքային տնտեսության մեջ արտադրողական հարաբերությունները, փորի բնույթագրմանը մենք այժմ դիմում ենք:

Փոխանակող տնտեսություն—հասարակ ապրանքային յեվ կապիտալիստական:

Փոխանակային տնտեսությանն են պատկանում թե հասարակ ապրանքային տնտեսությունը և թե կապիտալիստականը: Փոխանակային տնտեսության հիմնական նշանները պարզելու համար մենք մի առ ժամանակ մի կողմ թողնենք այն հատկանիշ գծերը, փորոնք հատուկ են արդյունաբերության միմիայն կապիտալիստական ձևին (կապիտալիստական շահագործում, վարձու աշխատանք և այլն), և մեր ուշադրությունը կենտրոնացնենք առ այժմ հասարակ ապրանքային արտադրության վրա, փորի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ըմբռնելու նաև ավելի դարգացած, և ապրանքային ավելի բարդ տնտեսության, այսինքն կապիտալիստական տնտեսության հատկանիշները:

Վորոնք են պարզ ապրանքային տնտեսության հիմնական հատկանիշները: Առաջինն այն է, փոր պարզ ապրանքային տնտեսության մեջ (տարբերվելով նախնական—կոմունիստական կամ ապագա կոմունիստական հասարակությունից) գոյություն ունի արտադրության միջոցների և աշխատանքի արդյունքների նկատմամբ, մասնավոր սեփականություն:

Սակայն այստեղ արտադրության միջոցները դեռ անջատված չեն բանվորական ուժից, ինչպես լինում է կապիտալիստական հասարակության մեջ, և իրար դեմ հակադիր չեն: Արտադրական միջոցների սեփականատերը, միջերքներն արտադրում է վոչ թե իր անձնական սպառման, այլ ծախելու համար, իսկ իրեն համար անհրաժեշտ միջերքները նա ձեռք է բերում շուկայում, գնելով այդ միջերքներն ուրիշ արտադրողներից:

Յերկրորդ, այդպիսի հասարակության մեջ գոյություն ունի (առանձին ապրանքարտադրողների մեջ) բազմակերպված փակ տնտեսության մեջ հասարակության անդամները համայնորեն տիրում են արտադրական միջոցներին, համայնորեն արտադրում ու բաշխում են իրար մեջ իրենց աշխատանքի արդյունքը, ապա ապրանքային հասարակության մեջ դրությունը բոլորովին այլ է:

Յուրաքանչյուր արտադրող արտադրում է փորոշ տեսակի միջերք: Ամեն մի առանձին ձեռնարկության, արհեստանոցի կամ գյուղացիական տնտեսության մեջ, ուր շուկայի համար միջերքներ են պատրաստում, գոյություն ունի կազմակերպված աշխատանքի տնտեսական բաժանում, փորը յեթեմարկված է փորոշ պլանի: Սակայն այսպիսի հասարակության մեջ ընդհանուր տնտեսական պլան գոյություն չունի. բացակայում է այն հասարակական մարմինը, փորը գիտակցորեն և պլանաչափ կերպով կանոնարարություն արտադրությունն ու բաշխումը: Այստեղ յուրաքանչյուր ապրանքարդյունաբերող արտադրում է իր անձնական ուժով և պատասխանատվությամբ:

Այսպիսի հասարակության մեջ արտադրողներից վոչ մեկը առաջուց չգիտե, թե ինչ է պահանջվում շուկայում, փորքան պետք է պատրաստվի այս կամ այն տեսակի ապրանքից, ինչ հատկության կամ ինչ յեղանակով և այլն: Հետևապես այսպիսի տնտեսության մեջ իշխում է արտադրական անիշխանություն, այնպիսի անիշխանություն, փորը ստեղծում է արտադրական միջոցների վրա գոյություն ունեցող ու մասնավոր սեփականությունն ու անկազմակերպ տարերային հասարակական աշխատանքի բաժանումը:

Կազմակերպված անկազմակերպ տնտեսության մեջ աշխատանքի բաժանման հատկանիշները Մարքսը այսպես է բնորոշում. նախնի-հնդկա-համայնքում աշխատանքը հասարակականորեն բաժանված էր, թե կան¹⁾ համայնքում աշխատանքը արդյունքն ապրանք չեր դառնում: Յուրաքանչյուր գործարանում ևս աշխատանքը սխտեմատիկորեն բաժանված է, սակայն այս բաժանումը չի կատարվում այնպես, փոր բանվորները փոխանակեն իրենց անհատական աշխատանքի արդյունքները:

Միմիայն ինքնուրույն, իրարից անկախ անհատական աշխատանքի արդյունքներն են իրար դեմ հակադրված, իբրեւ ապրանք (ընդգծումը մերն է—խմբագր.):

Այսպես ուրեմն, յեթե կազմակերպված հասարակության մեջ անդամների աշխատանքային գործունեությունը ղեկավարում են գիտակցական մարմիններն, ապա ապրանքային տնտեսության մեջ ղեկավարումը կատարվում է փոփոխական, շուկայի միջոցով: Այստեղ յուրաքանչյուր արտադրող շաղկապված է մյուսի հետ միմիայն շուկայի միջոցով, իրենց աշխատանքի միջերքների փոխանակումով—ապրանքով:

¹⁾ Հնդկական համայնքը, առսական հին համայնքի պես, փակ տնտեսության տիպի յեր և հիմնված էր հողի կոլեկտիվ ոգտագործման վրա:

Ապրանքային հասարակութեան մեջ մարդկանց արտադրական հարաբերութիւններն անմիջապէս չեն ստեղծվում ինչպէս կադմակերպված տրնտեսութեան կամ թե առանձին ձեռնարկութիւնները մեջ, (ինչպէս դիցուք գործարանում), այլ իրականանում են տարեբային կերպով, իրերի, ապրանքների միջոցով:

Վորպէսզի տվյալ իրերն իրար հարաբերեն իբրև ապրանք, ապրանքատերերը իրար պետք է հարաբերեն իբրեւ աշխատի անձինք, վորոնց կամքը ամփոփված է այդ իրերի մեջ:

Այսպէս ուրեմն, մի ապրանքատեր միմիայն մյուսի կամքով, հետեւապէս, նրանցից յուրաքանչյուրը, միմիայն յերկուսի ընդհանուր կամքով, կարող է յուրացնել մյուսի ապրանքը, զիջելով իր սեփականը («կապիտալ», յերես 52):

Անհրաժեշտ է նկատել, վոր հասարակ ապրանքային տնտեսութիւնը, իր դուռ տեսքով պատմականորեն գոյութիւն չի ունեցել, այլ նա հյուսված է յեղել հասարակական մյուս ձևավորումների հետ (ինչպէս դիցուք ավատական տնտեսութեան հետ):

Հանձին արհեստավորների և գյուղացիների, վորոնք իրենց սեփական արտադրական ոգնութեամբ շուկայի համար մթերքներ են արդարում, մենք ունենք աշխատի հասարակ ապրանք-արտադրողներ, վորոնք նախակապիտալիստական հասարակութեան մնացորդներ են և իրենց գոյութիւնը պահպանել են մինչև այսօր:

Հասկանալի չէ, վոր նրանց տնտեսական դերը ներկայիս յերկրորդական է, նրանց այդ դերը յենթարկված է տիրող կապիտալիստական հարաբերութիւններին (կապիտալիստական յերկրներում) կամ խորհրդային հասարակութեան (ինչպէս մեզ մոտ ԽՍՀՄ-ում):

Սակայն պարզ ապրանքային տնտեսութեան ելութիւնն ըմբռնելու և նրա հատկանիշները պարզելու համար անհրաժեշտ է, վոր նա մեր առջ կանգնած լինի իր սեփական տեսքով: Անհրաժեշտ է, հետևապէս, այդ տնտեսութիւնը առանձնացնել (դիցուք ավատական) այն հարաբերութիւններից, վորոնցով նա շրջապատված զարգացել է:

Հասարակ ապրանքային տնտեսութիւնը, այսինքն, պարզ, ինքնուրույն ապրանք-արտադրողների տնտեսութիւնը փոխանակող հասարակութեան ամենապարզ և ընդհանուր տիպն է: Իր պատմական զարգացման ընթացքում, նա քայքայում է փակ տնտեսութեան հարաբերութիւնները և իր հերթին, արտադրողական ուժերի զարգացման շնորհիւ, հետզհետեւ բարդանում և փոխարինվում է կապիտալիստական տնտեսութեամբ: Պարզ ապրանքային տնտեսութեան զարգացման ընթացքում աստիճանորեն և անընդհատ ծնվում է կապիտալիզմը: Մի բևեռում առաջ է գալիս համեմատական չափով մի փոքր խումբ, վորը ուժեղացնում է իր տնտեսական կորովը, կենտրոնացնում է իր ձեռքում ավելի շատ արտադրական գործիքներ ու միջոցներ և այսպիսով փոխարկվում է վարձու աշխատանքով ոգտվող կապիտալիստի: Մյուս բևեռում հավաքվում է արտադրողների հիմնական մասան, վորը զարգացող փոխանակման գործողութեան ընթացքում հետզհետեւ քայքայվում, դառնում է վարձու բանվոր, սեփականատերերի համար իբրև բանվորական ուժ, վորը կապիտալիստներին, այսինքն արտադրական միջոցների տերերին, ծախում է իր բանվորական ուժը:

Արտադրական միջոցների տերն ու բանվորական ուժի տերն այժմ, թշնամի դասակարգերի պէս, իրար հակընդէմ են: Կապիտալիստական հասարակութեան ամենից բնորոշ և առանձնահատուկ զիծը կապիտալի միջոցով վարձու աշխատանքի շահագործումն է:

Աշխատանքի շահագործումը գոյութիւն է ունեցել նաև նախակապիտալիստական հասարակութեան մեջ, որինակ, ստրկատիրական և ավատական կարգերում, սակայն այդ կարգերում նա կրում էր բացարձակ, մեր անմիջական ըմբռնմանը մատչելի բնույթ:

Բոլորովին այլ կերպ է կապիտալիստական շահագործումը. որինակ, արտաքուստ թվում է (ինչպէս պնդում են և բուրժուական եկոնոմիստները), վոր աշխատավարձը աշխատանքի գինն է, բայց վոչ բանվորական ուժի վարձը, ինչպէս մենք քիչ հետո կը համոզվենք: Բայց յեթե բանվորը ստանում է իր աշխատանքի վարձը և յեթե նա, աշխատելով, ասենք որական 10 ժամ, ստանում է այնքան վարձատրութիւն, վորը հավասարվում է իր ստեղծված աշխատանքի արժեքին, ապա անհայտանում է շահագործման ամեն մի հնարավորութիւն:

Կապիտալիստի և բանվորի այս հարաբերութիւնը դառնում է իրերի, ապրանքի շարժում, բանվորական ուժը և ապրանքը փոխանակվում է զրամական վորոշ գումարի հետ: Սակայն վորպէսզի այս արտաքին տեսանկի յերևույթները մեջ կարողանանք մերկացնել նրանց իսկական հարաբերութիւնները, անհրաժեշտ է զինվել մաքրաիստական թեորիայով:

Կապիտալիստական հասարակութեան արտադրական հարաբերութիւնները իբրեւ անմիջական որչեկտ քաղաքատնտեսութեան համար:

Ի տարբերութիւն կադմակերպված տնտեսութիւնից՝ ապրանքային տնտեսութեան մեջ արտադրական հարաբերութիւնները վորոշվում ու պարզվում են վոչ անմիջականապէս, այլ իրերի միջոցով: Առանձին ապրանք-արտադրողներն իրար հետ անմիջապէս կապված չեն: Նրանցից յուրաքանչյուրը արտադրում է անկախորեն, տնտեսութեամբ է պարապում ինքնուրույն կերպով, իր սեփական ռիսկով ու պատասխանատվութեամբ: Նրանց միջի կապը յերեւման է գալիս միմիայն նրանով, վոր նրանք փոխանակում են իրար հետ իրենց աշխատանքի արդիւնքը: Այսպիսով ապրանքային տնտեսութեան մեջ մարդկանց արտադրական հարաբերութիւնները թաղանթվում են շուկայում շարժվող ապրանքի յետևը:

Քաղաքատնտեսութեան խնդիրն էլ հենց այդ արտադրական հարաբերութիւնների մերկացումն է, նա պարզում է այն տարեբային որեւնքները, վորոնք զեկավարում են կապիտալիստական տնտեսութիւնը: Հետևապէս, մենք կարող ենք քաղաքատնտեսութիւնը բնորոշել իբրև կապիտալիստական հասարակութեան արտադրական հարաբերութիւնների զիտութիւն:

Բուրժուական քաղաքատնտեսութիւնը կապիտալիստական հասարակութիւնը համարում է իբրև հավերժական մի յերևույթ, մի հասարակակարգ: Նրա համար պրոդուկտների ապրանքային ձևը, արժեքը, փողն իրերին պատկանող հատկութիւններ են, բայց վոչ թե ապրանքային տնտեսութեան հասարակական հարաբերութիւնների հետևանք, արտահայտութիւն: Կապիտալը, որինակ, զիտվում է վոչ թե աշխատի հասարակական հարաբերութիւն, վոր հատուկ է միմիայն տնտեսական ձևազորման, այլ աշխատի մի յերեւույթ, վորը անկախ է հասարակական և տնտեսական կազմի բնույթից:

Այսպէս, որինակ, բուրժուական տնտեսութիւնը կապիտալը բնորոշում է իբրև արտադրութեան միջոց: Բայց յեթե կապիտալը արտադրութեան միջոց է, ապա ակներև, պետք է ընդունել, վոր կապիտալը, կապիտալիստական հասարակակարգը, կապիտալիստական շահագործումը յեղել է և պետք է լինի, վորը այլ կերպ և չի կարող լինել:

Մինչ մարքսիստական քաղաքատնտեսությունը մերկացնում է կապիտալիստական տնտեսության իսկական ելությունը, բացում է նրա մեջ ամփոփված հակասությունները և նրա պատմականորեն անցողիկ բնույթը: Պարզելով կապիտալիզմի ծագման, զարգացման և կործանման ոլորտները, նա տալիս է բանվոր դասակարգի ձեռքը կապիտալիստական հասարակարգը վերջնապես հաղթահարում հզոր մի զենք:

Ինքնատուգման հարցեր:

1. Վերոնք են կազմակերպված տնտեսության հատկանիշները:
Ինչպես է կազմակերպված նրա մեջ արտադրությունը և բաշխումը:
2. Ինչու է կազմակերպված տնտեսության արտադրական հարաբերությունները քաղաքատնտեսության համար ուսումնասիրության նյութ չեն ծառայում:
3. Ինչով է պարզ ապրանք-արտադրողների տնտեսությունը տարբերվում կապիտալիստական տնտեսությունից:
4. Վերոնք են կապիտալիստական տնտեսության բնորոշ գծերը:
5. Ինչու է քաղաքատնտեսությունն ուսումնասիրում է միմիայն ապրանքա-կապիտալիստական տնտեսությունը:
6. Ինչ նշանակություն ունի քաղաքատնտեսությունը պրոլետարիատի դասակարգային պայքարի համար:
7. Ինչ է քաղաքատնտեսությունը:

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա.

Արժեք լեվ արժեքի ձևով.

(Առաջադրություն № 1, ինքնուրույն մշակման և ռեգենզիայի ներկայացնելիք զրավոր աշխատանքի համար).

Ն Ե Ր Ա Ծ Ո Լ Թ յ Ո Լ Ն.

Նախորդ դասախոսությամբ համառոտ գծերով պարզեցինք քաղաքատնտեսության առարկան և ապրանքային արտադրության ընդհանուր պայմանները:

Ներկա առաջադրությամբ մենք պետք է մշակենք և ուսումնասիրենք քաղաքատնտեսության դժվարագույն պրոբլեմներից մեկը՝ արժեքի թեորիան:

Արժեքի թեորիայի ուսումնասիրման հիմնական խնդիրն է ստանալ դիտական զաղափար ապրանքային արտադրության այն արտադրական հարաբերությունների մասին, վորոնք թաքնված են իրերի շարժման հետևից, և, մյուս կողմից, հասկանալ այդ շարժման հիմնական որինակա-նությունը (անս, «Ապրանքային կապիտալիզմի պլանի» բաժինը):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն.

Կարելի չէ ոգտվել հետևյալ հիմնական աղբյուրներից.

1. Միխայիլովսկի — «Քաղաքատնտեսություն»: Պետական հրատարակչու-թյուն. Յերեվան 1928 թ. (հայերեն).

II. Ռուսերեն լեզվով *И. Лапидус и К. Островитянов* — «Политическая экономия в связи с теорией советского хозяйства» Изд. 3 Отд. I: «Стоимость как регулятор товарного хозяйства» §§ 7—16, стр. 21—52.

III. Կառլեյի — «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը» (այս գրքի վորևե հրատարակությունը) 1-ին բաժին, գլուխ 1, § 2 «Արժեք» և § 3 «Փոխանակային արժեք», յերես 21, 39.

А. Кон. «Курс политической экономии», ч. I, Гиз. 1928 г., глава II «Теория стоимости», § 6 («Трудовые затраты как основа цен») § 13 включительно (стр. 19—40).

Թ Ե Մ Ա Յ Ի Պ Լ Ա Ն Ը.

I. Ապրանքի վերլուծումը.

1. Ապրանք և ապրանքի յերկ-բնույթը.
2. Սպառողական արժեք և փոխանակային արժեք.

II. Արժեքներ սեղծող աշխա-սանք.

1. Կոնկրետ ու վերացական աշ-խատանք.
2. Հասարակականորեն անհրա-ժեշտ աշխատանք.
3. Արժեք և աշխատանքի ար-տադրողականություն.
4. Հասարակ և բարդ աշխա-տանք.

III. Արժեքի ձևվերք.

1. Արժեքի հասարակական պա-տահական ձևը.
2. Արժեքի լրիվ լայնացված ձևը.

3. Արժեքի ընդհանուր ձևը.

Արժեքի դրամական ձևը.

IV. Արժեք վորպես փոխանա-կային հասարակության ռեգու-լյատոր.

1. Գինը վորպես փոխանակա-յին հասարակության հա-սարակական արտադրու-թյան արտաքին ռեգու-լյատոր.
2. Գնի վոր ստույգ բացատրումը. Գնի կախումն աշխատանքային արժեքից.
3. Արժեքի որևեք փոխանա-կող հասարակության հա-վասարակչություն որևե-քն է.

Ապրանքային Ֆեթիշիզմ.

1. Ապրանքային ֆեթիշիզմի ելությունը.
2. Արժեքը վորպես հասարա-կական հարաբերություն.

Այս թեմայի գրականության ցանկը

Միխայիլովսկի — «Քաղաքատնտեսություն», պետական հրատ. Յերեվան 1928 թ. գլ. III «Արժեք» և 4-դ գլխից «Արժեքի ձևերը»: Գրված է հանրամատչելի:

Ф. Дунельштейн и С. Харин — Христоматия по политической экономии, т. I, ч. I, Гиз. 1925 г.

Այս խրատոմատիայի մեջ ժողոված են զանազան յերկերից բավա-կանին արժեքավոր կտորներ (Մարքսից, Ենգելսից, Բուխարինից և այլն):

Այս խրատոմատիան տվյալ թեմայի համար ընտիր տեղեկատու և ձեռնարկ է (16—61):

I Բաժնին վերաբերյալ—Ապրանքի վերլուծումը

Մարքսը փաստորեն տարբերում է ապրանքի բնական ձևը, իբրև արտաքին այնպիսի մի առարկա, մի իր, վորը իր հատկություններով պետք է ծառայի մարդկային պետքներին (Կ. յերես 1)¹⁾ նրա այն հասարակական հատկություններին, ավելի ձիշտը այն հասարակական հարաբերություններին, վորն այդ իրը փոխարկում է ապրանքի: Այսպիսով Մարքսը մեզ ծանոթացնում է ապրանքի յերկու Ֆակտորի հետ: Առաջին՝ նրա սպառողական արժեքը և յերկրորդ՝ արժեքի կամ փոխանակման արժեքի հետ. վերջինս նախ և առաջ յերեւան է գալիս իբրև քանակային հարաբերություն, իբրև պրոպորցիա, վորի մեջ սպառողական արժեքի մի տեսակը փոխանակվում է սպառողական արժեքի մյուս տեսակի հետ (Կ. յերես 2):

Վորպեսզի կարողանաք հիմնովին պարզել, ինչ տարբերություն կա սպառողական և փոխանակման արժեքների միջև, խորհուրդ ենք տալիս քննել այս հարցը թե ինչու սպառողական արժեքն ինքնին յերեւան չի հանում մարդկանց հասարակական հարաբերությունները, և թե ինչու նա հատուկ է ամեն մի թե կազմակերպված և թե անկազմակերպ հասարակությունը:

Ապրանքի յերկրնույթն ու փոխանակային արժեքի հասարակական բնույթը պարզելուց հետո, անհրաժեշտ է պարզել նաև այն հարցը, թե ինչու փոխանակային արժեքը պետք է ունենա արտահայտման ձևից տարբեր ինչ վոր մի բովանդակություն: Ինչու և կայանում այդ բովանդակությունը:

Այս հարցի պատասխանը կարող եք գտնել Լապլիդուսի և Ոստրովիտյանովի դասագրքում, (§ 7) ինչպես և Միխայելսկու համառոտ դասընթացքում, 3-րդ հոդված (յեր. 22—28):

II-րդ բաժնին վերաբերյալ—Արժեք ստեղծող աշխատանքը.

Յերբ կարդվի Մարքսի կողմից սահմանված ապրանքի յերկրնույթը, այսինքն ապրանքի սպառողական և փոխանակման արժեքներն, այնուհետև կարելի յե դիմել արժեք ստեղծող աշխատանքի յերկրնույթի ուսումնասիրմանը: Ինչպես ապրանքը նույնպես և այս աշխատանքն անհրաժեշտ է հետազոտել յերկու կողմից: Առաջին՝ սպառողական արժեք ստեղծելու յեվ յերկրորդ՝ արժեք ստեղծելու տեսակետից: Մարքսը, ինչպես ապրանքի, նույնպես և արժեք ստեղծող աշխատանքի մեջ գտնում է կրկնակի բնույթ, այսինքն կոնկրետ և վերացական աշխատանք: Վորպեսզի աշխատանքի մասին, ինչպես և վերջինիս ու կոնկրետ աշխատանքի միջև յեղած տարբերության մասին ավելի լրիվ գաղափար ստացվի, խորհուրդ ենք տալիս կարդալ Միխայելսկու «Քաղաքատնտեսության համառոտ կուրսից» § 11-ը, յերես 31. Լապլիդուսի և Ոստրովիտյանովի գրքերում այս հարցն արծարծված է § 2-ում յեր. 31—34. Կոնի գրքում 22—33 յերեսներում:

Աշխատանքի յերկրնույթի ուսումնասիրողը պետք է պարզ գաղափար կազմի թե ինչու արժեքը ստեղծվում է վերացական աշխատանքով և ինչ կերպ պետք է հասկանալ Մարքսի այս պնդումը:

¹⁾ Մարքսի «Ապրանքի» ցուցումը թե այստեղ և թե հետագայում կը նշանակվի սկզբնական կ տարով:

Սա նշանակում է, արդյոք, թե վերացական աշխատանքն աշխատանքի առանձին մի տեսակն է, և վոր այդ աշխատանքը գոյություն ունի անկախ նրա կոնկրետ ձևից: Ինչպիսի պայմաններում և ինչու աշխատանքը ստանում է այդպիսի կրկնակի բնույթ: Արժեքի քանակային բնույթագրի պարզմանը դառնալով, անհրաժեշտ է վորոշել, առաջին, արդյոք անհատական, թե հասարակական աշխատանքն է այն Ֆակտորը, վորը վորոշում է արժեքի մեծությունը, և յերկրորդ, թե ինչպես առանձին ապրանք—արտադրողների մրցման ընթացքում շուկայի տարերայնությունը աշխատանքի անհատական ծախսերը դարձնում է հասարակականորեն անհրաժեշտ ժամանակ:

Հասարակականորեն անհրաժեշտ ժամանակի հարցը լուսարանվում է Լապլիդուսի և Ոստրովիտյանովի դասագրքի 34—35 յերեսներում, ու բերվում են մի շարք կոնկրետ որինակներ, վորոնց մասին անհրաժեշտ է խորհել լավ յուրացնելու համար: Կարևոր է կարդալ նաև Միխայելսկու § 11, յերես 31: Ներկա թեման ըստ կապիտալի մշակողները իրենց ուղադրությունը պետք է կենտրոնացնեն 4—5 յերեսների վրա: Անհրաժեշտ է նաև կանգ առնել հասարակականորեն անհրաժեշտ ժամանակի և աշխատանքի արտադրողականության կապի ու փոխադարձ ազդման վրա:

Այստեղ ամենից առաջ կարևոր է նաև պարզել արժեքի կապումը աշխատանքի արտադրականության մեծանալուց յեվ նվազումից¹⁾, և յերկրորդ, արժեքի այդպիսի փոփոխումների նշանակությունը, վորը կանոնավորում է փոխանակող տնտեսության մեջ հասարակական արտադրությունն ու աշխատանքի բաժանումը: Տես այս մասին Լապլիդուսի յեվ Ոստրովիտյանովի դասագրքի § 12, յերես 35—38:

Արժեքի քանակային բնույթագրումը անհրաժեշտ է ավարտել պարզ և բարդ և վորակյալ աշխատանքի ուսումնասիրությամբ: Ուսանողը ամենից առաջ պետք է պարզի այս յերկու տեսակների տարբերությունը, իսկ այնուհետև պետք է լուսարանի ռեդուկցիայի պրոբլեմը, այսինքն բարդ աշխատանքի պարզացումը:

Այս հարցի մասին տես Լապլիդուսի յեվ Ոստրովիտյանովի դասագրքի § 13, երես 30—41, կամ Կոնի գրքը՝ յերես 23—25, ինչպես և Միխայելսկու § 12 և նույն հեղինակի «Քաղաքատնտեսության համառոտ դասընթացի» § 38-ը:

III Բաժնին վերաբերյալ—Արժեքի ձեւերը.

Արժեքի բոլոր ձևերը, վորոնք անհրաժեշտ է ուսումնասիրել, յերեք են. 1) արժեքի պարզ կամ պատահական ձևը, 2) արժեքի լրիվ կամ պարզած ձևը, 3) արժեքի ընդհանուր ձևը, վերին հետագա զարգացումը փողն է: Առանձին ուղադրություն պետք է դարձնել արժեքի պարզ ձևի վերլուծմանը, վորը սաղմային վիճակում արդեն պարունակում է դրամական ձև: Արժեքի յուրաքանչյուր ձևի գաղտնիքը, ըստ Մարքսի, ամփոփված է արժեքի այս պարզ ձևի մեջ: Այդ պատճառով ել գլխավոր դժվարությունը նրա վերլուծումն է (Կ. 12 յեր.) Միխայելսկի § 14, յերես 41, Միխայելսկի—Համառոտ դասընթաց, § 40, յերես 154:

Նախքան արժեքի պարզ ձևից մյուսներին անցնելը խորհուրդ է տրվում պարզել այն հարցը, թե ինչու արժեքի պարզ ձևը փոխանակման

¹⁾ Աշխատանքի արտադրողականությանից պետք է տարբերել աշխատանքի ինտենսիվությունը:

հետագա դարգացման համար բավական չե, և ինչո՞ւ նա անխուսափելիորեն փոխանակվում է արժեքի ձևի, իսկ հետո ընդհանուր և դրամական ձևի:

1. Արժեքի ձև ասելով ի՞նչ պետք է հասկանալ:
2. Արժեքի հասարակ ձևը ապրանքի պարունակվող ի՞նչպիսի հակասությունն է յերեվան բերում:
3. Ի՞նչ են ներկայացնում այն բևեռները, վորոնց վերև լուծվում է արժեքի հասարակ ձևը:
4. Ի՞նչպիսի պայմաններ արժեքի պարզ ձևը դարձնում են անբավարար և այդ ձևը փոխարկում են պարզած ձևի:
5. Ինչո՞ւն է արժեքի պարզ ձևի և նրա պարզած ձևերի սկզբունքային տարբերությունը:
6. Արժեքի ընդհանուր ձևը ի՞նչպիսի արմատական փոփոխություն է մուծում հասարակության տնտեսական կյանքի մեջ:
7. Համեմատած արժեքի ընդհանրական ձևի հետ, դրամական ձևը ի՞նչպիսի նորություն է մուծում:

V. Բաժնին վերաբերյալ—Արժեքը, վորպես փոխանակային տնտեսություն ռեգուլյատոր.

Ուսումնասիրելով ապրանքային արտադրության ընդհանուր պայմաններն, արժեքը և նրա ձևերի հիմնական դադափարները, մենք կարող ենք պարզել, թե ի՞նչ պրոբլեմ է փոխանակային տնտեսության ռեգուլյատորը:

Այստեղ հարց է ծագում, թե ինչ ձևով է պահպանվում հավասարակշռությունը մասնավոր սեփականության, զատված ապրանք-արտադրողների և փոխանակող տնտեսության միջև, ի նկատի առնելով, վոր վերջինս իր ելույթամբ անկազմակերպ և անիշխանական է:

Ինչո՞ւ այսպիսի տարերային ձևով կանոնավորվող հասարակությունը հետին հաշվով զարգացման ընդունակ է:

Խնդրի այս մասի մշակումը առանձին դժվարություն չի հարուցի, յեթե նախկին բաժնիները յուրացած լինեն բավարար կերպով: Այս բաժինը մշակելու համար բոլորից հարմար ձևնարկները Հապիդուսի յեվ Ոստրովիտյանովի գիրքն են (§§ 9—10, յեր. 25—30) և Կոնի Բաղաճատնությունության դասնթացքը (յեր. 17—18 և 27—31): Կարևոր են նաև Միխայիլսկու գրքի § 10-րդ. յեր. 10, նաև այդ հեղինակի համառոտ դասնթացքի § 6, յեր. 14.

V Բաժնին վերաբերյալ—Ապրանքային ֆետիշիզմ:

Անհրաժեշտ է պարզել ապրանքային աշխարհի ֆետիշական բնույթը և փոխանակության տնտեսության մեջ մարդկանց իրացրած արտադրական հարաբերությունները: Կարևոր է ըմբռնել վոր ֆետիշիզմը, վորի մասին Մարքսը խոսում է իր «Կապիտալի» 1-ին հատորում, վոչ թե մարդկանց հասարակ մոլորությունն է, վորոնք իրերին վերագրում են գերբնական հատկություններ, այլ նա ծնվում է ապրանքային հասարակության իրական պայմաններով, նույն հասարակության աշխատանքի ինքնահատուկ և հասարակական բնությունով:

Ապրանքային ֆետիշիզմի տեսության յուրացումը ճիշտ գաղափար է տալիս աշխատանքի մասին, իբրև այնպիսի պատմական կատեգորիայի

մասին, վորը հատուկ է միայն փոխանակող տնտեսությանը, և դյուրացնում է քաղաքատնտեսության հետագա պրոբլեմների ուսումնասիրությունը:

Այս թեմայի գրականությունը կարգալիս խորհուրդ ենք տալիս ընտրել հետևյալ կարգը.

1. Հապիդուս յեվ Ոստրովիտյանով § 6, յեր. 19—20. Միխայիլսկի § 13, յեր. 40.

2. Կաուցկի—Տնտեսական ուսմունք, վերջին մասը, առաջին գլխի § 1 (մոտ 2 յերես):

Միխայիլսկի, Համառոտ դասնթացք—§ 10:

Գրավոր աշխատանքի համար առաջագրություններ.

1) Քննադատության ուղարկելիք գրավոր աշխատանքի առաջադրությունները գրել հետևյալ վարիանտներից.

Առաջին վարիանտ.

Ինչո՞ւ միմիայն վերացական աշխատանքը և վոչ թե կոնկրետ աշխատանքն է արժեքներ ստեղծում փոխանակային հասարակության մեջ:

2) Աշխատանքային արտադրության փոփոխությունը ի՞նչպես է ազդում արժեքի մեծության վրա:

Յերկրորդ վարիանտ.

1) Դրամը ինչպես է ծագում և ինչպես է ծավալվում արժեքի ձևերի զարգացումով:

2. Հիմնավորել վերացական աշխատանքի հասկացողությունը:

Ամեն մի հեռակա սովորող ըստ իր հայեցողության ընտրում է այս վարիանտներից վորովի մեկը (ի նկատի ունենալով իր պատրաստականությունը, տվյալ թեմայի յուրացումն ու մշակման չափը, ինչպես և գրավոր կերպով իր մտքերն արծարծելու ունակությունը): Ավելի նվազ պատրաստականություն ունեցողը, կարող է իր աշխատանքը գրել ընտրելով առաջին վարիանտի հարցերից վորևե մեկը:



965



2013

